

ԳՃԵՐ ԳՅԱՅՐԿՈՒ ԿԵՇՆՔԻՑ

Ամենամօտիկ տարիներս ոռւսաց գրականութեան
մէջ մեծ աղմուկ հանեց Մակախ Գօրկին։ Խնչպէս լայտ-
նի է, նա երկար տարիներ թափառական կեանք վա-
րելով ստիպուած է եղել հացի խնդրի համար ամեն
տեսակ գործի ձեռք զարնել, ոչ մի աշխատանքից, որ
կարող էր մի կտոր ցանաք հաց տալ, չփախչել նորա
վիճակի մէջ եղել են շատ շատերը, բայց քչերին է
յաջողուել արտաքու կարգի շնորհքի կամ տաղանդի շնոր-
հիւ գուրս գալ իրենց ընկած գուռթիւնից։ Դրանցից մէ-
կըն է նաև Շալեապինը, ներկայումս Ռուսիալում հըռ-
չակ վայելող երգիշը։ Բայց սրանից մի 10—12 տարի
առաջ Մ. Գօյրկին աւելի լարգ է ունեցել իրեւ երգիչ,
քան թէ Շալեապինը։ Այսպէս, օրինակ, մի անգամ մի
անտրպէնեօր Վոլգայի քաղաքներից մէկում գուար-
ճանոցի համար խումբ է կազմելիս եղել։ Եւ որովհե-
տեւ այդ միջոցին Գօյրկին ու Շալեապինն առանց գոր-
ծի են եղել, ուստի նրանք էլ դիմել են, որ իրենց
խմբի մէջ ընդունեն։ Զայները փորձելով տեսել են,
որ Գօյրկին բաւական լաւ երկրորդ տենօր է, իսկ Շա-
լեապինի ձայնը փոխուելու շըջանում լինելով, նրան
չեն հաւանել և չեն ընդունել։

Գօյրկին, ինչպէս նկատեցինք, ամեն տեսակ գոր-
ծի մէջ եղել է և նրա ձեռքի ոլժը հէնց նրա մէջն է,
որ նա իւր տեսածն ու քաշածը նկարագրում է զար-
հուրելի ճշտութեամբ։ «Լումալի» համարներից մէկում
հրատարակեցինք նրա «26 տղամարդ և մի աղջիկ» պատ-
կերը։ Այդ պատկերի նկարագիրը լրացնելու համար ա-
ւելորդ չենք համարում լիշել, որ Գօյրկին ինքն էլ
մասնակցում էր ալնտեղ և իւր լիշողութիւնների մէջ
այդ մասին ասել է Լեինին... «Առ հասարակ այդ մի-
ջոցներին (սրանից 10—12 տ. առաջ), ես սիրում էի
երգել և կարողանում էլ էի երգել։ Մանաւանդ շատ էինք

երգում երբ որ փռնում, հայթուիների արտէլի մէջն էի աշխատում: Սարսափելի վատ պայմանների մէջ էինք աշխատում. առաւօտեան վաղ սկսում էինք գործը և գիշերը ուշ վերջացնում: Այդ դժոխալին դրութեան մէջ միակ միիթարութիւնը երգն էր. սաղ օրը երգ էր: Երբեմն խմբով էինք երգում, երբեմն մենակ: Մանաւանդ շատ աւ էր երգում չինգեանա Պաշկան: Երբեմն բոկեղները կձգէր փուրը, կիենուէր թիակին, աչքը կփակէր ու կսկսէր երգել, ալնպէս երգել, որ ջիգեարդ կայրի: Նրա երգը մի ալնպիսի թախիծ էր ձըդում, որ երբեմն պահանջում էին, որ լոիր Խոկ ջնգեանան ալնպէս էր իւր երգով լափշտակում, որ աշխարքիս երեսին ամեն բան կմուանար: Նատ անդամ բոկեղները փոնից այլրուած դուրս կգալին:

Այժմ արդէն Գոյրկին ձայն չունի: Նա ալդ բանն ալնպէս է բացատրում: Մի անգամ ես երկաթուղու վըրալ գիշերապահի պաշտօն էի ստացել: Աշնանալին մի մութ գիշեր պէտք է պահպանէի մի կոյտ ալըով լըցրած ջուալներ: Սաստիկ վատ եղանակ էր, ցուրտ քամի էր փչում, լորդ անձրել վերեկց թափւում: Տափատանն ալնպէս խաւարել էր, որ մատդ աչքը կոխէիր, բան չէր երեալ...: Յանկարծ քամին բաց արաւ ջուալների վրալ ծածկած բրեզէնտը: Ի՞նչ արած. պէտք էր վերև բարձրանալ, նորից ծածկել. տհան կոյտի վերեւում քամին վիաթաթեց, քլոլեց ինձ բըէզէնտի մէջ և ներքեւ շպրտեց: Եւ ալնպէս պինդ կպալ երկաթուղու գըծին կամ մի ուրիշ բանի, որ իսկոյն ուշագնաց եղալ...» Դրանից լետոյ Գոյրկու վիզն ուռչում է. անդամահատում են ու դրանով էլ ձալնը կորչում:

1898 թուին Նիժնալի ցուցահանդէսին Գոյրկին Օճառք. Ա. ի թղթակցի պաշտօնն է վարելիս եղել. բայց նա գտնուել է մի ալնպիսի տաժանելի դրութեան մէջ, որ առողջութիւնը կորցրել, թոքախտ է ստացել: Խոկ պատանեկան հասակում նրա կեանքն ալնպէս էր դարսուած, որ ստիպուած էր անձնասպանութեան գիմել. բայց ձեռքը դողդողում է, գնդակը նպատակից վրիպում և Գոյրկին սաղ մնում: